Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«.....» «.....» 2021 թվականի N ..... -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 209 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» N 209 որոշմամբ հաստատված կարգի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) կարգի 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21. Գույքի առանձին տարրեր գնահատվում են սույն կարգի II գլխով սահմանված կարգով, ընդ որում, իրավաբանական անձանց գույքի կազմում չգտնվող (այդ թվում՝ իրավաբանական անձի գույքի կազմից առանձնացված) անշարժ գույքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։»,

2) կարգի 22-րդ կետով սահմանված անշարժ գույքի գնահատման ակտի N 02 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետով նախատեսված փոփոխությունները՝ մասնավորեցման ենթակա ընկերությունների գնահատման դեպքերի, որը ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 15-ից։

Հավելված

ՀՀ կառավարության 2021 թվականի

..... – ի N ..... - Ն որոշման

ՁԵՎ 2

ԱԿՏ N 02

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ*

_____

(ընկերության կամ օբյեկտի անվանումը, գտնվելու վայրը (հասցեն))

(հազ. դրամ)

NN ը/կ	Անվանումը	Ընդհանուր մակերեսը (քառ. մ)	Անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքը	Անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքում ներառված հատկացված հողամասի նահատված շուկայական արժեքը (լրացվում է առանձին գնահատված լինելու դեպքում)**	Հատկացված հողամասի ընդհանուր մակերեսը (քառ. մետր) և տվյալ պահին գործող կադաստրային գարժեքը		Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7	8
1.	Շենքեր և շինություններ՝ հատկացված հողամասի նկատմամբ իրավունքներով հանդերձ						

2. Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ
3. Բազմամյա տնկարկներ՝ հատկացված հողամասի նկատմամբ իրավունքներով հանդերձ
4. Շահագործման մեջ չգտնվող անշարժ գույք՝ հատկացված հողամասի նկատմամբ իրավունքներով հանդերձ
5. Չկառուցապատված հողամասեր***

Ընդամենը

* Ակտը լրացվում է՝ համաձայն անշարժ գույքի գնահատման մասին հաշվետվության:

** Հողամասի գնահատված շուկայական արժեքը չի կարող պակաս լինել տվյալ պահին հողամասի գործող կադաստրային արժեքից:

***Ակտը լրացվում է իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի առկայության դեպքում:

Գնահատող (գնահատողներ)	_____ (ստորագրությունը)	_____ (անունը, ազգանունը)
	_____ (ստորագրությունը)	_____ (անունը, ազգանունը)
	_____ (ստորագրությունը)	_____ (անունը, ազգանունը)
	_____ (ստորագրությունը)	_____ (անունը, ազգանունը)

Գնահատող
կազմակերպության
ղեկավար

«_____» _____ 20 թ.